

ԿԱՐԾԻՔ

Թագուհի Սլավիկի Չափանյանի «Բյուջետային ծախսային քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հեղազոտության թեմայի արդիականությունը

Ընտրված ատենախոսական թեման արդիական է ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ կիրառական տեսանկյունից: Բյուջետային ծախսային քաղաքականությունը փոքր բաց տնտեսության համար միայն հանրային ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմ չէ, այլ նաև տնտեսական աճի, ներքին պահանջարկի, ներդրումային ակտիվության, մարդկային կապիտալի և սոցիալական կայունության վրա ազդող կարևորագույն գործիք: ՀՀ տնտեսության պարագայում այս հիմնախնդիրը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով արտաքին շուկերի, պարտքային բեռի, կապիտալ ծախսերի թերակատարումների և պետական ֆինանսների արդյունավետ կառավարման խնդիրների համադրությունը:

Թեման առավել արդիական է դառնում 2020 թվականից հետո ձևավորված տնտեսական միջավայրով պայմանավորված, երբ համավարակը, պատերազմական իրադարձությունները, անվտանգության ծախսերի աճը և արտաքին տնտեսական պայմանների փոփոխությունները պահանջեցին ոչ միայն պետական ծախսերի ծավալային ավելացում, այլև դրանց կառուցվածքի վերաիմաստավորում: Այս համատեքստում բյուջետային ծախսերի առանձին ուղղությունների ազդեցության գնահատումը և դրանց արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտումը կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ-ում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման առանձին հոդվածների և տնտեսական աճի բաղադրիչների միջև կապերի ամբողջական վերլուծությունը դեռևս բավարար չափով զարգացած չէ: Հեղինակը փորձել է լրացնել այդ բացը՝ համադրելով տեսական մոտեցումները, միջազգային փորձը, վիճակագրական վերլուծությունը և տնտեսաչափական մոդելավորման արդյունքները:

Հեղափոխության նպատակը և խնդիրները

Ատենախոսության **նպատակն** է գնահատել բյուջետային ծախսային քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա և բացահայտել այդ քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները: Նպատակի ձևակերպումը համապատասխանում է ընտրված թեմայի տրամաբանությանը և թույլ է տալիս հետազոտությունը կառուցել ինչպես մակրոտնտեսական փոխազդեցությունների, այնպես էլ պետական ծախսերի կառավարման արդյունավետության տեսանկյունից:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ **հիմնական խնդիրները**.

- ուսումնասիրվել են պետական ծախսերի դասակարգման համակարգերը, դրանց մեթոդաբանական հիմքերը և կիրառական նշանակությունը,
- դիտարկվել են բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխառնչության տեսական հայեցակարգերը, ինչպես նաև այս ոլորտում իրականացված էմպիրիկ հետազոտությունների արդյունքները,
- վերլուծվել է պետական ֆինանսական միջոցների տեղաբաշխման միջազգային փորձը և դրա կիրառելիության հնարավորությունները ՀՀ-ի համար,
- ուսումնասիրվել է ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականությունը բնութագրող հիմնական ցուցանիշների շարժընթացը,
- գնահատվել են ՀՀ տնտեսական աճի կառուցվածքային բաղադրիչները՝ ՀՆԱ-ի արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկվող ցուցանիշների հիման վրա,
- կիրառվել են վեկտորական ավտոռեգրեսիոն և բազմագործոն ռեգրեսիոն մոդելներ՝ բյուջետային ծախսերի և տնտեսական աճի միջև կապերը բացահայտելու նպատակով,
- նախանշվել են ՀՀ պետական բյուջեի ծախսային կառուցվածքի բարելավման, ծրագրային բյուջետավորման և հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները:

Հետազոտության գիտական նորույթը

Հետազոտության շրջանակներում իրականացված հետազոտությունների ընթացքում ստացված և գիտական նորույթ պարունակող տեսամեթոդական և կիրառական հիմնական արդյունքները հետևյալ են.

1. Կառուցված բազմագործոն ռեգրեսիայի և վեկտորական-ավտոռեգրեսիայի (VAR) մոդելների կիրառմամբ գնահատվել են ՀՀ տնտեսական աճի և բյուջետային ծախսերի աճի փոխադարձ ազդեցությունները, ըստ որոնց կարճաժամկետ ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճն ավելի մեծ դրական ազդեցություն ունի բյուջետային ծախսերի աճի վրա, քան բյուջետային ծախսերի աճը՝ տնտեսական աճի: Միաժամանակ, ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ ընթացիկ ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա ավելի մեծ է, քան կապիտալ ծախսերի ազդեցությունը:
2. ՀՀ տնտեսական աճի վրա ըստ գործառական դասակարգման բյուջետային ծախսերի ազդեցության գնահատման արդյունքում բացահայտվել է, որ տնտեսական աճին առավել մեծ նպաստ են բերում կրթության և առողջապահության վրա կատարվող պետական ծախսերը՝ որպես մարդկային կապիտալի զարգացման հիմնական գործոններ:
3. Էմպիրիկ հետազոտության հիման վրա բացահայտվել է ՀՀ գործառական դասակարգման բյուջետային ծախսերի առաջնային ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի բաղադրիչների վրա, մասնավորապես, տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը դրական են ազդում արտահանման ծավալների, սոցիալական պաշտպանության ծախսերը՝ վերջնական սպառման, իսկ պաշտպանության ծախսերը՝ ներդրումների աճի վրա:
4. Մշակվել է «բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվ», որը թույլ է տալիս գնահատել և համեմատել բյուջետային ծրագրերի միջոցառումների արդյունավետությունը՝ դրանց համար սահմանված նպատակների և հատկացված ֆինանսական միջոցների կատարողականի համադրման միջոցով:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը ընդհանուր առմամբ ունի տրամաբանական կառուցվածք և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 157 էջ, ներառում է 11

աղյուսակ, 43 գծապատկեր, 118 անուն օգտագործված գրականություն և 5 հավելված: Նյութի շարադրանքի հաջորդականությունը համապատասխանում է հետազոտության նպատակին և ապահովում է անցում տեսական հիմնավորումներից դեպի էմպիրիկ վերլուծություն և կիրառական առաջարկություններ:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը և խնդիրները, սահմանված են հետազոտության առարկան ու օբյեկտը, ներկայացված են տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Ներածական հատվածը բավարար չափով արտացոլում է հետազոտության ընդհանուր տրամաբանությունը և ցույց է տալիս ընտրված թեմայի գիտագործնական նշանակությունը:

Արենախոսության առաջին «Բյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև կապերի տեսամեթոդական հիմնահարցերը» գլուխը նվիրված է բյուջետային քաղաքականության և տնտեսական աճի փոխկապվածության տեսամեթոդաբանական հիմնահարցերին: Այստեղ ներկայացվում են բյուջետային ծախսերի բնութագրիչները, պետական ծախսերի և տնտեսական աճի կապի տեսական մոտեցումները, ինչպես նաև տարբեր երկրներում բյուջետային ծախսերի կառուցվածքային առանձնահատկությունները: Գլուխը ստեղծում է անհրաժեշտ տեսական հիմք հետագա էմպիրիկ ուսումնասիրության համար:

Հետազոտության երկրորդ «ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը» գլուխը կենտրոնացած է ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխազդեցության գնահատման վրա: Հեղինակը վերլուծում է ՀՀ բյուջետային ծախսերի կառուցվածքի դինամիկան, տնտեսական աճի բաղադրիչները և կիրառելով VAR ու ռեգրեսիոն մոդելներ՝ գնահատում է բյուջետային ծախսերի, եկամուտների, պետական պարտքի և իրական ՀՆԱ-ի միջև կապերը: Գլխի արժեքավոր կողմն է այն, որ ընդհանուր մակարդակի գնահատումից բացի փորձ է արվում անցնել ծախսերի առանձին ուղղությունների ազդեցության բացահայտմանը:

Հետազոտության երրորդ՝ «ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության կադարելագործման ուղիները» գլուխը նվիրված է ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության կադարելագործման ուղիներին: Այս

գլխում քննարկվում են ծախսային կառուցվածքի բարելավման հնարավորությունները, կրթության, առողջապահության, տնտեսական հարաբերությունների, պաշտպանության և սոցիալական պաշտպանության ուղղությունների ազդեցությունը, ինչպես նաև պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմները: Կարևոր է հատկապես ծրագրային բյուջետավորման, միջնաժամկետ ծախսային շրջանակի և բյուջետային ծրագրերի գնահատման խնդիրների ընդգրկումը:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և ներկայացվել են հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման առաջարկներ: Դրանք վերաբերում են հակապարբերաշրջանային հարկաբյուջետային կանոնների ներդրմանը, ծախսային բազմարկիչների պարբերական գնահատմանը, կապիտալ ծախսերի կայունության ապահովմանը, կրթության և առողջապահության ֆինանսավորման ավելացմանը, ՄԺԾԾ գործընթացի բարելավմանը և ծրագրային բյուջետավորման արդյունքահենության ուժեղացմանը:

Դիտողություններ արենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արժանիքներին զուգահեռ անհրաժեշտ է նշել նաև մի շարք բովանդակային և մեթոդաբանական բնույթի դիտողություններ.

1. Ատենախոսության երկրորդ գլխի 2.3 ենթագլխում (էջ 95) դիտարկվում է բյուջեի կապիտալ ծախսերի և անվանական ՀՆԱ-ի միջև հարաբերակցությունը: Անվանական ՀՆԱ-ի աճը, ինչպես հայտնի է, պայմանավորված է ոչ միայն արտադրության իրական ծավալների աճով, այլև գների մակարդակի փոփոխություններով: Այդ պատճառով կապիտալ ծախսերի 6 եռամսյակ անց անվանական ՀՆԱ-ի վրա ազդեցության հիման վրա տնտեսական աճի մասին եզրահանգումները պահանջում են ավելի զգուշավոր մեկնաբանություն: Ցանկալի կլիներ իրականացնել լրացուցիչ գնահատումներ՝ իրական ՀՆԱ-ի ցուցանիշի ներառմամբ:
2. VAR մոդելի և Granger-ի պատճառականության թեստի արդյունքներով բյուջետային ծախսերը վիճակագրորեն նշանակալի պատճառական ազդեցություն չեն ունենում տնտեսական աճի փոփոխության վրա, մինչդեռ տնտեսական աճն է ազդում բյուջետային ծախսերի վրա: Այս կարևոր արդյունքը որոշ դեպքերում լիարժեք չի արտացոլվում հետագա՝ տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը վերաբերվող

եզրահանգումներում, որտեղ բյուջետային ծախսերը հաճախ ներկայացվում են որպես աճի խթանման ուղղակի գործիք: Կարծում ենք, որ ծախսային քաղաքականության ազդեցությունը անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե որպես պարզ պատճառական կապ, այլ որպես պայմանական և միջնորդավորված ազդեցություն՝ կախված եկամուտներից, պարտքային սահմանափակումներից, արտաքին միջավայրից և ծախսերի որակից:

3. Աշխատանքում լավագույնն է համարվել 8 լագով VAR մոդելը, սակայն եռամսյակային մոտ 100 դիտարկումների պարագայում նման լագային կառուցվածքը կարող է հանգեցնել պարամետրերի մեծ թվի, ազատության աստիճանների կրճատման և գերգնահատման ռիսկի: Թեև ներկայացվել են կայունության, ավտոկոռելացիայի և հոմոսկեդաստիկության ստուգումներ, այնուամենայնիվ ամբողջական վստահելիության համար ցանկալի կլինեք իրականացնել լրացուցիչ կայունության ստուգում (robustness check)՝ տարբեր լագային երկարություններով, ենթաշրջաններով և ճգնաժամային տարիները առանձնացնող խուլ (dummy) փոփոխականներով: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսի կոմից իրականացվեր նաև 2008-2009թթ., 2020թ. և 2022թ. շուկերի ազդեցության գնահատումը:
4. Աշխատանքում ընթացիկ ծախսերը դիտարկվում են որպես կարճաժամկետ պահանջարկը խթանող գործոն, իսկ կապիտալ ծախսերը՝ երկարաժամկետ աճի աղբյուր: Սակայն այս դասակարգումների ներսում առկա են էապես տարբեր տնտեսական բնույթ ունեցող հոդվածներ: Ընթացիկ ծախսերի մեջ ներառված են աշխատավարձեր, սոցիալական տրանսֆերտներ, ապրանքների և ծառայությունների գնումներ, տոկոսավճարներ, որոնց ազդեցությունները նույնական չեն: Նույն կերպ կապիտալ ծախսերի ազդեցությունը կախված է նախագծերի որակից, ներմուծվող կապիտալ ապրանքների մասնաբաժնից, կառավարման կարողություններից և ներդրումների ընտրության մեխանիզմներից: Ուստի ծախսերի կառուցվածքային վերադասավորման առաջարկները ավելի համոզիչ կլինեին, եթե հիմնված լինեին ոչ միայն խոշոր խմբերի, այլև դրանց ներքին բաղադրիչների և որակական բնութագրերի գնահատման վրա:
5. Աշխատանքում մշակված «բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվը» հետաքրքիր կիրառական մոտեցում է, սակայն դրա կառուցման մեթոդաբանությունը կարիք ունի ավելի մանրամասն հիմնավորման: Մասնավորապես, բավարար չափով պարզաբանված չեն ցուցանիշների ընտրության սկզբունքները, կշիռների ձևավորումը,

նորմավորման մեթոդը, զգայունության վերլուծությունը և համաթվի կապը իրական սոցիալ-տնտեսական վերջնարդյունքների հետ: Նույնը վերաբերում է նաև մի շարք գործնական առաջարկություններին, որոնք ընդհանուր առմամբ ճիշտ ուղղվածություն ունեն, սակայն պահանջում են ներդրման հստակ մեխանիզմներ՝ պատասխանատու մարմիններ, ժամկետներ, ֆինանսական գնահատականներ, իրավական փոփոխությունների շրջանակ և պարտքի կայունության հետ համադրություն:

Եզրակացություն

Նշված դիտողությունները կրում են հիմնականում մեթոդաբանական և բովանդակային բնույթ և չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գիտական ու գործնական նշանակությունը: Աշխատանքը նվիրված է Հայաստանի տնտեսության համար կարևոր և արդիական հիմնախնդրի, ունի տրամաբանական կառուցվածք, հիմնված է բավարար տեսական և տեղեկատվական բազայի վրա, պարունակում է էմպիրիկ վերլուծության արդյունքներ և գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ:

Ատենախոսությունը վկայում է հեղինակի կողմից հանրային ֆինանսների, բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսաչափական վերլուծության հիմնահարցերի պատշաճ իմացության մասին: Հեղինակին հաջողվել է համադրել տեսական մոտեցումները, միջազգային փորձը և ՀՀ վիճակագրական տվյալների վերլուծությունը՝ ներկայացնելով բյուջետային ծախսերի կառուցվածքի բարելավման և պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղություններ:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի 9 գիտական հրապարակումներում, որոնցից 1-ը ներառված է SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ **Թագուհի Սլավիկի Զափանյանի** «Բյուջետային ծախսային քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների

տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Ռուս-Հայկական համալսարանի

Տնտեսագիտության տեսության և անցումային

շրջանի տնտեսության հիմնախնդիրների

ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ի.Բ. Պետրոսյան

Ի.Բ. Պետրոսյանի ստորագրության

իսկությունը հաստատում եմ

Ռուս-Հայկական համալսարանի

գիտական քարտուղար, Բ.Գ.Թ.



Ռ.Ս. Կասաբաբովա